ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013 թ. հունվարի 31 թիվ 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի հունվարի 30-ի N 8-Ա որոշմամբ հաստատված հիմնական միջոցառումների պլանի 11.3.1 կետի պահանջների

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2013 թվականի մարտի 1-ին Աշտարակի թիվ 1 հիմնական դպրոցում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով:
2. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությանը ընդգրկել, Արագածոտնի մարզային փրկարարական վարչության Աշտարակի հրշեջ-փրկարարական ջոկատը, փրկարարական ջոկատը, դպրոցի ՔՊ կազմավորումները, Աշտարակի ոստիկանությունը:
3. Մարզային փրկարարական վարչության պետին՝ նախապատրաստել ուսումնավարժության բոլոր մասնակիցներին, մշակել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և մինչև 2013 թվականի փետրվարի 11-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի հաստատմանը:
4. Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման աշխատանքների և պատրաստ լինելու մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ժ/Պ Ա.ԱՐՍԵՆՅԱՆ